ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2015 Թ.
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ

Երևան - 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն---------- 05
2. 2015 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվ ----------18
3. 2014 և 2015 թթ. եկամուտների և ծախսերի համեմատական վերլուծություն ----------42
4. 2015 թ. ծրագրեր և միջոցառումներ ----------67
5. 2015 թ. ծախսերը ըստ կառուցվածքային ստորաբաժանումների------85
6. Իջևանի մասնաճյուղի 2015 թ. ֆինանսավորումը պետական բյուջեից բարձրագույն կրթության ծրագրով----------93
7. Առանձին կառուցվածքային ստորաբաժանումների 2015 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվներ----------96
8. Լրացուցիչ կրթական դասընթացների 2014-2015 ուստարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվներ ---------- 103

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բուհի կառավարման կարևորագույն գործառույթներից է դրամական հոսքերի պլանավորումը: Եկամուտների և ծախսերի նախահաշիվը դրամական հոսքերի արտահայտումն է նպատակային ծրագրերի իրականացման և կազմակերպության զարգացման համար:

ԵՊՀ 2015 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի պատրաստման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

- Անընդհատություն, երբ գնահատվում է կազմակերպության անընդհատ գործելու հնարավորությունը:
- Հետևողականություն, երբ հոդվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը պահպանվում է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել կազմակերպության գործառնությունների բնույթում, որոնք հանգեցնելու են ավելի պատշաճ ներկայացմանը:
- Էականություն և միավորում, երբ յուրաքանչյուր էական հոդված ներկայացվում է առանձին, իսկ ոչ էական հոդվածները միավորվում են համանման բնույթի կամ գործառույթի հոդվածների հետ:
- Համադրելիություն, երբ թվային ողջ տեղեկատվության գծով բացահայտվում է նախորդ ժամանակաշրջանին վերաբերող համադրելի տեղեկատվությունը:
- Նախահաշվի հոդվածների ճկունություն:
- Բուհի ֆինանսատնտեսական գործառույթների պլանավորում:
- Ռեսուրսների բաշխման օպտիմալացում:

Նախահաշվի հոդվածների ցուցանիշները կազմվել են համաձայն նախորդ տարվա նախահաշվի կատարողական ցուցանիշների, ինչպես նաև կանխատեսումների և պլանավորման հիման վրա:

Նախահաշվի հոդվածներն արտահայտված են ՀՀ դրամով, չափի միավորը՝ հազար դրամ, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:

Գործառույթների արտարժութային հոսքերը նախահաշվում հաշվարկվել են ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2014 թ. դեկտեմբերի 6-ին սահմանված արտարժութային շուկայում ձևավորված դրամի միջին փոխարժեքը:

ԵՊՀ նախահաշվի եկամուտների և ծախսերի հոդվածների միջոցների չափը և բաշխումները ի գիտություն են ընդունվել ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:

Նախահաշվի եկամուտները կազմված են.

1. Գործառնական գործունեությունից ստացվող եկամուտներից,
   այդ թվում՝

1.1. Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից,
   այդ թվում՝

1.1.1. Առկա ուսուցման բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի վճարովի ուսուցման ծառայությունից,

1.1.2. Հեռակա ուսուցման ծառայությունից:

1.2. Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից,
   այդ թվում՝

1.2.1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծառայությունից,
   այդ թվում

1.2.1.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բարձրագույն կրթական ծառայությունից,

1.2.2. Գիտական և գիտատեխնիկական գործունեությունից,
   այդ թվում՝

1.2.2.1. Դրամաշնորհային (թեմատիկ) աշխատանքների, բազային լաբորատորիաների և միջազգային համագործակցության ծրագրերից,

1.2.2.2. Հավելավճարներ գիտական աստիճանների շնորհման ծրագրերից,

1.2.2.3. Գիտական գործուղումների, գիտաժողովների կազմակերպման, ծրագրերից,

1.2.2.4. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրերից,

1.2.3. Այլ գործունեությունից
   այդ թվում՝

1.2.3.1. Պրահայի և Բուխարեստի համալսարաններում հայոց լեզվի դասավանդման ծրագրերից:

1.2.3.2. Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրման ծրագրով:

1.2.3.3. «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպման ծրագրով:

2. ԵՊՀ կանոնադրությամբ թույլատրված գործառնական այլ եկամուտներից
   այդ թվում՝

2.1. Եկամուտներ լրացուցիչ կրթական դասընթացներից,

2.2. Եկամուտներ համատեղ գործունեության ծրագրերից,

2.2. Եկամուտներ ուսումնաարտադրական բազաների ծառայություններից,

2.3. Եկամուտներ հյուրերի տան ծառայություններից,

2.4. Եկամուտներ ատամնաբուժական ծառայություններից,

2.5. Եկամուտներ վարձակալությունից,

2.6. Եկամուտներ մարզասրահի ծառայություններից,

2.7. Եկամուտներ ընդունելության քննությունների կազմակերպումից,

2.8. Եկամուտներ փաստաթղթերի ձևակերպումներից,

2.9. Եկամուտներ քննությունների կազմակերպումից,

2.10. Այլ եկամուտներ:

3. Ոչ գործառնական եկամուտներից,

այդ թվում՝

3.1. Եկամուտներ դրամաշնորհային ծրագրերից,

3.2. Եկամուտներ՝ դրամական միջոցները բանկում որպես ավանդ ձևակերպված գումարներից ստացվող տոկոսներից,

3.3. Եկամուտներ բարեգործական միջոցներից:

Նախահաշվի ծախսերը կազմված են.

Ա. Ընթացիկ ծախսերից,

այդ թվում՝

1. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների (ԱՎՈՒՄ) և դրան հավասարեցված վճարումների ծախսերից.

այդ թվում՝

1.1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծախսեր,

1.3. Վարչական անձնակազմի ծախսեր ,

1.2. Ուսումնաօժանդակ անձնակազմի ծախսեր ,

1.4. Սպասարկող և այլ անձնակազմի ծախսեր ,

1.5. Հավելավճարներ պրոֆեսորադասախոսական և այլ անձնակազմի աշխատակիցներին հեռակա ուսուցման եկամուտներից,

1.6. Տարբերակված աշխատավարձ պրոֆեսորադասախոսական անձնակազմին,

1.7. Ժամավճարային հիմունքով վճարվող դասախոսական անձնակազմի ծախսեր,

1.8. Մանկավարժական պրակտիկայի ծախսեր,

1.9. Գիտական գործունեության անձնակազմի ծախսեր,

1.10. Դրամաշնորհային ծրագրի և լրացուցիչ կրթական դասընթացների

անձնակազմի ծախսեր,

1.11. Պայմանագրային աշխատանքներ,

1.12. Խրախուսման և ֆինանսական աջակցության ծախսեր:

2. Կրթաթոշակի ծախսեր,

այդ թվում՝

2.1. Բակալավրիատի ուսանողների կրթաթոշակի ծախսեր,

2.2. Մագիստրատուրայի ուսանողների կրթաթոշակի ծախսեր,

2.3. Ասպիրանտական կրթաթոշակի ծախսեր,

2.4. Անվանական կրթաթոշակի ծախսեր,

2.5. Դրամաշնորհային ծրագրերի կրթաթոշակի ծախսեր:

3. Վճարումներ պետական բյուջե,

այդ թվում՝

3.1. Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ,

3.2. Բյուջե փոխանցվող տարածքի վարձավճարներ:

4. Կոմունալ վճարների ծախսեր,

այդ թվում՝

4.1. Էլեկտրաէներգիայի ծախսեր,

4.2. Գազի ծախսեր,

4.3. Ջրամատակարարման և ջրահեռացման ծախսեր,

4.4. Կոմունալ այլ ծախսեր:

5. Փոստի և կապի վճարների ծախսեր,

այդ թվում՝

5.1. Հեռախոսակապի ծախսեր,

5.2. Ինտերնետ կապի ծախսեր,

5.3. Փոստային ծախսեր:

6. Գրասենյակային ծախսեր,

այդ թվում՝

6.1. Գրենական պիտույքների ծախսեր,

6.2 . Քարտրիջների և դրանց լիցքավորման ծախսեր:

7. Ապրանքանյութական պաշարների ծախսեր,

այդ թվում՝

7.1. Շինանյութեր,

7.2. Տնտեսական ապրանքներ,

7.3. Սննդային ապրանքներ,

7.4. Համակարգչային պարագաներ,

7.5. Լամպեր և լուսարձակներ,

7.6. Տպագրական նյութեր,

7.7. Փափուկ գույք,

7.8. Քիմիական և լաբորատոր նյութեր,

7.9. Մարզական գույք,

7.10. Դեղորայք,

7.11. Գործիքներ,

7.12. Ապրանքանյութական այլ պաշարներ:

8. Տրանսպորտային ծախսեր,

այդ թվում՝

8.1. Վառելիքի և քսայուղի ծախսեր,

8.2. Ավտոսպասարկման և ավտոպահեստամասերի ծախսեր,

8.3. Տրանսպորտային միջոցների վարձակալության ծախսեր:

9. Ծառայությունների ձեռքբերման ծախսեր,

այդ թվում՝

9.1. Տպագրական ծառայություններ,

9.2. Գույքի նորոգման և սպասարկման ծառայություններ,

9.3. Ցուցանակների պատրաստման ծառայություններ,

9.4. Գովազդային ծառայություններ,

9.5. Որակավորման բարձրացման դասընթացների ծառայություններ,

9.6. Փաստաթղթերի արխիվացման ծառայություններ,

9.7. Ասպիրանտուրայի դիմորդների դասընթացների ծառայություններ,

9.8. Աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ,

9.9. Ապահովագրական ծառայություններ,

9.10. Արտադրական պրակտիկայի կազմակերպման ծառայություններ մասնագիտացված կազմակերպություններում,

9.11. Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հյուրասիրությունների կազմակերպման ծառայություններ,

9.12. Չափագրումների, հեղինակային և տեխնիկական հսկողությունների, նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմման և փորձաքննության ծառայություններ,

9.13. Հակահրդեհային միջոցառումների մասնագիտական ծառայություններ,

9.14. Բանկային և մաքսային ձևակերպումների ծառայություններ,

9.15. Տեսանյութերի, ֆիլմերի մոնտաժման և նկարահանման ծառայություններ,

9.16. Սանմաքրման ծառայություններ,

9.17. Անվտանգության պահպանման ծառայություններ,

9.18. Այլ ծառայություններ:

10. Ներկայացուցչական ծախսեր:

11. Անդամավճարային ծախսեր:

12. Վարձակալության ծախսեր,

այդ թվում՝

12.1. Մարզասրահների վարձակալության ծախսեր,

12.2. Բնակարանների վարձակալության ծախսեր,

12.3. Սրահների և հյուրատների վարձակալության ծախսեր,

12.4. Տեխնիկայի, լուսարձակների, բեմական պարագաների և այլ գույքի վարձակալության ծախսեր:

13. Գործուղման ծախսեր,

այդ թվում՝

13.1. Ֆակուլտետների և համահամալսարանական ամբիոնների գործուղման ծախսեր,

13.2. Վարչական և այլ անձնակազմի գործուղման ծախսեր,

13.3. Ուսանողական գործուղումների ծախսեր,

13.4. Միջազգային օլիմպիադաներին մասնակիցների գործուղման ծախսեր,

13.5. Գործուղման ծախսեր ՀՀ տարածքում,

13.6. Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգի և Ցանցային համալսարանների հետ համագործակցության շրջանակներում ուսանողների ուսուցման նպատակով գործուղման ծախսեր,

13.7. Գիտական գործունեությամբ նախատեսված գործուղման ծախսեր,

13.8. Դրամաշնորհային ծրագրերով նախատեսված գործուղման ծախսեր:

14. Նպատակային ֆինանսավորումների ծախսեր,

այդ թվում

14.1. Համաֆինանսավորման ծախսեր,

14.1. Ֆինանսավորումներ գործընկեր կազմակերպություններին:

15. Գրադարանային ծախսեր,

այդ թվում՝

15.1. Թերթերի և ամսագրերի բաժանորդագրման ծախսեր,

15.2. Էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրման ծախսեր,

15.3. ԵՊՀ հրատարակությամբ գրքերի ձեռքբերման ծախսեր,

15.4. Այլ հեղինակներից գրքերի ձեռքբերման ծախսեր:

16. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսեր,

այդ թվում՝

16.1. Ուսանողական նպաստների ծախսեր,

16.2. Արտոնություն ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցման ծախսեր,

16.3. Սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման ծախսեր,

16.4. Կրթաթոշակի ծախսեր:

17. Այլ ծախսեր (շահույթի բաշխման ծախսեր),

այդ թվում՝

17.1. Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ համագործակցության ծախսեր,

17.2. Բարեգործական ծախսեր,

17.3. Մշակութային միջոցառումների տոմսերի ձեռքբերման ծախսեր,

17.4. Պահուստային ֆոնդ՝ նախատեսվում է տարվա ընթացքում չնախատեսված սակայն տվյալ իրավիճակում անհրաժեշտ համարվող ծախսերի կատարման համար

17.5. Այլ ծախսեր:

Բ. Ոչ ընթացիկ ծախսեր,

այդ թվում՝

18. Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր,

այդ թվում՝

18.1. Համակարգչային գույք,

18.2. Լաբորատոր սարքավորումներ,

18.3. Կահույք,

18.4. Օդորակիչներ,

18.5. Հակահրդեհային գույք

18.6. Ոչ նյութական ակտիվներ,

18.7. Ահազանգման համակարգ,

18.8. Կաթսաներ,

18.9. Ոչ ընթացիկ այլ ակտիվներ:

19. Շինարարական և հիմնանորոգման ծախսեր:

այդ թվում՝

19.1. Կենտրոնական, ուսումնական և գրադարանի մասնաշենքերում,

19.2. Մարզահամալիրի մասնաշենքում

19.3. ԵՊՀ ընդհանուր օգտագործման տարածքների, համակարգերի, ցանկապատերի և այլ նորոգման աշխատանքներ

ԵՊՀ գործառույթների բնույթից ելնելով՝ նախահաշվի որոշ հոդվածների բաշխումը կատարվում է հետևյալ ձևով.

1. Ըստ ռեկտորի հրամանների և կարգադրությունների, մասնավորապես՝

1.1. Ներկայացուցչական ծախսեր,

1.2. Անդամավճարներ,

1.3. Պահուստային ֆոնդ,

1.4. Այլ ծախսեր (կուտակված շահույթի բաշխում),

1.4. Կառուցվածքային ստորաբաժանումների գործուղման ծախսերի և այլ ծախսերի բաշխում:

2. «Պրակտիկայի ծախսեր» հոդվածով նախատեսված միջոցների բաշխումը կատարվում է ուսումնամեթոդական վարչության պրակտիկայի բաժնի և վարչության պետի ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ:

3. Գրադարանային ծախսերի բաշխումը կատարվում է գրադարանի տնօրենի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ:

4. «Տրանսպորտային ծախսեր» հոդվածի միջոցների բաշխումը կատարվում է ավտոպարկի վարիչի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:

5. Շինարարական և հիմնանորոգման ծախսերի բաշխումը կատարվում է ինժեների ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ:

6. Պետական բյուջեից Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման նախահաշվի կազմումը կատարվում է մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ:

7. Պետական բյուջեից ֆինանսավորվող գիտահետազոտական թեմաների, լաբորատորիաների և կենտրոնների նախահաշվի կազմումը կատարվում է համապատասխան ղեկավարների միջոցով, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստատմամբ:

8. ԵՊՀ առանձին կառուցվածքային ստորաբաժանումների եկամուտները և ծախսերը.

8.1. Հյուրերի տան եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմումը կատարվում է տնօրենի ներկայացմամբ, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստատմամբ:

8.2. Ուսումնաարտադրական բազաների եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմումը կատարվում է տնօրենների ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:

8.3. Ատամնաբուժարանի եկամուտների և ծախսերի նախահաշիվը կազմվում է տնօրենի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:

8.4. Լրացուցիչ կրթական դասընթացների եկամուտների և ծախսերի նախահաշիվները կազմվում են վարիչների ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ:

9. «Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր» հոդվածի միջոցների բաշխումը կատարվում է հետևյալ կերպ.

9.1. Շինանյութեր և տնտեսական ապրանքներ՝ տնտեսական մասի պարետների, գլխավոր էներգետիկի և շահագործման բաժնի պետի ներկայացմամբ, ընդհանուր
հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

9.2. Լամպեր և լուսարձակներ՝ տնտեսական մասի գլխավոր էներգետիկի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

9.3. Տպագրական նյութեր՝ տպագրական արտադրամասի աշխատակցի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

9.4. Սննդային ապրանքներ՝ պրակտիկայի բաժնի ղեկավարի և ուսումնաարտադրական բազաների տնօրենների ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

9.5. Մարզական գույք՝ ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի վարիչի ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ,

9.6. Քիմիական և լաբորատոր նյութեր՝ ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության ֆակուլտետների դեկանների ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ,

9.7. Փափուկ գույք՝ հյուրերի տան տնօրենի, ուսումնաարտադրական բազաների

տնօրենների ներկայացմամբ, համապատասխան պրոռեկտորների հաստատմամբ,

9.8. Դեղորայք՝ ատամնաբուժական կենտրոնի ղեկավարի, բուժկետի բուժակի, ուսումնաարտադրական բազաների տնօրենների միջոցով, համապատասխան պրոռեկտորների հաստատմամբ,

10. «Ծառայությունների ձեռքբերման ծախսեր» հոդվածի միջոցների բաշխումը կատարվում է հետևյալ կերպ.

10.1. Փաստաթղթերի արխիվացման ծախսեր՝ արխիվային ծառայության պետի միջոցով, ռեկտորի հաստատմամբ,

10.2. Գույքի նորոգման և սպասարկման ծախսեր՝ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

10.3. Ցուցանակների պատրաստման ծախսեր՝ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

*10.*4. Ասպիրանտուրայի դիմորդների համար դասընթացների ծառայության ծախսեր՝ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստատմամբ,

*10.*5. Աուդիտորական և խորհրդատվական ծառայությունների ծախսեր՝ ռեկտորի հաստատմամբ,

10.6. Չափագրումների, հեղինակային և տեխնիկական հսկողությունների, նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմման և փորձաքննության ծառայություններ՝ ինժեների ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,

10.7. Հակահրդեհային միջոցառումների մասնագիտական ծառայություններ՝ հակահրդեհային ծառայության պետի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

10.8. Տեսանյութերի, ֆիլմերի մոնտաժման և նկարահանման ծառայություններ՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:

11. Ուսանողական միջոցառումների ծախսերը կատարվում են ԵՊՀ ուսանողական խորհրդի և ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահների ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:

12. Մշակութային միջոցառումների ծախսերը կատարվում են մշակութային կենտրոնի տնօրենի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
13. Շրջանավարտների հետ տարվող աշխատանքների և կարիերայի զարգացման միջոցառումների ծախսերը կատարվում են շրջանավարտների և կարիերայի կենտրոնի տնօրենի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
14. Հասարակայնության և լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքների ծախսերը կատարվում են հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
15. Կրթական բարեփոխումների անցկացման ծախսերը կատարվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալների ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ:
16. Դրամաշնորհային ծրագրերով նախատեսված ծախսերը կատարվում են ծրագրի ղեկավարի ներկայացմամբ, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստատմամբ:
17. Հակահրդեհային միջոցառումների ծախսերը կատարվում են հակահրդեհային ծառայության պետի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
18. Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման աշխատանքները կատարվում են տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության պետի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
19. Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հոդվածի միջոցների բաշխումը կատարվում է հետևյալ կերպ.

19.1. Համակարգչային գույք՝ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

19.2. Լաբորատոր սարքավորումներ՝ ֆակուլտետների դեկանների ներկայացմամբ, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով

պրոռեկտորի հաստատմամբ,

19.3. Կահույք՝ ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,

19.4. Տրանսպորտային միջոցներ՝ ավտոպարկի վարիչի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,

19.5. Գրադարակներ՝ գրադարանի տնօրենի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,

19.6. Կաթսաներ՝ կաթսայատան վարիչի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,

19.7. Ձայնային և լուսային տեխնիկա՝ մշակույթի կենտրոնի տնօրենի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:

20. ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներ.

- Նախահաշվի ծախսային հոդվածների միջոցները բաշխվել են հետևյալ կերպ.

20.1. Ըստ ֆակուլտետների.

20.1.1. Դասընթացային ծախսերը հատկացվում են ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների և պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի դրույքների թվի

20.1.2. Գործուղման ծախսերը հատկացվում են ըստ պրոֆեսորադասախոսական կազմի դրույքների թվի,

20.1.3. Այլ ծախսերը հատկացվում են համամասնորեն՝ ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների և պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ համակազմի դրույքների և ուսանողների թվի,

20.1.4. Ծառայությունների ձեռքբերման ծախսերը հատկացվում են ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների և պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի դրույքների թվի:

20.2. Ըստ կառուցվածքային այլ ստորաբաժանումների.

20.2.1. Դասընթացային ծախսերը հատկացվում են ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների և դրույքների թվի,

20.2.2. Ծառայությունների ձեռքբերման ծախսերը հատկացվում են ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների և դրույքների թվի,,

20.3. Ֆինանսական տարվա ընթացքում անձնակազմի հետագա փոփոխություններ դեպքում բերված ցուցանիշները ենթակա չեն փոփոխման:

20.4. Ստորաբաժանումների և ֆակուլտետների համար նախատեսված տարեկան ծախսերը (չափաբաժինները) կարելի է փոփոխել, ելնելով գործունեության բնույթից և նախորդ տարվա կատարողական ցուցանիշներից:

21. Յուրաքանչյուր տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարման մասին հաշվետվությունը կներկայացվի ԵՊՀ խորհրդին մինչև հաջորդ տարվա հուլիսի 1-ը:

2. 2015 Թ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևանի պետական համալսարանի 2015 թվականի դրամական հոսքերը կազմելու են.

1. Եկամուտների գծով՝ **9,690,000.0** հազար դրամ:
2. Ծախսերի գծով՝ **9,690,000.0** հազար դրամ:

Հ / Հ	Հոդված	Գումարը (հազար դրամ)
1.	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) գծով	**9,690,000.0**
2.	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) գծով	**9,690,000.0**

ԵՊՀ 2015 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը հավասարակշռված է:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2015 թ.
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

I Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	Հղում	Գումարը (հազար դրամ)
Ընդամենը			9,690,000.0
այդ թվում՝			
1.	Գործառնական գործունեությունից եկամուտներ		8,775,000.0
այդ թվում՝			
1.1	Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայություններից	Հավելված 1	6,267,415.0
1.2	Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումներից	Հավելված 2	2,507,585.0
2.	Գործառնական այլ եկամուտներից՝ ներառյալ ԱԱՀ	Հավելված 3	290,000.0
3.	Ոչ գործառնական եկամուտներից	Հավելված 4	625,000.0

Ի Ի Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	Հղում	Գումարը (հազար դրամ)
Ընդամենը			9,690,000.0
այդ թվում՝			
Ընթացիկ ծախսեր			8,837,500.0
այդ թվում՝			
1.	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր	Հավելված 5	6,653,000.0
2.	Կրթաթոշակի ծախսեր	Հավելված 6	219,000.0
3.	Վճարումներ պետական բյուջե	Հավելված 7	188,000.0
4.	Կոմունալ վճարների ծախսեր	Հավելված 8	328,000.0
5.	Փոստային և կապի վճարների ծախսեր	Հավելված 9	33,500.0
6.	Գրասենյակային ծախսեր	Հավելված 10	40,000.0
7.	Ապրանքանյութական պաշարների ծախսեր	Հավելված 11	151,500.0
8.	Տրանսպորտային ծախսեր	Հավելված 12	58,500.0
9.	Ծառայությունների ձեռքբերման ծախսեր	Հավելված 13	385,000.0
10.	Ներկայացուցչական ծախսեր		7,000.0
11.	Անդամավճարների ծախսեր		8,500.0

12.	Վարձակալության ծախսեր	Հավելված 14	21,500.0
13.	Գործուղման ծախսեր	Հավելված 15	168,000.0
14.	Նպատակային ֆինանսավորումների ծախսեր	Հավելված 16	205,000.0
15.	Գրադարանային ծախսեր	Հավելված 17	47,500.0
16.	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսեր	Հավելված 18	84,000.0
17.	Այլ ծախսեր	Հավելված 19	239,500.0
Ոչ ընթացիկ ծախսեր			852,500.0
այդ թվում՝			
18.	Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր	Հավելված 20	352,500.0
19.	Հիմնանորոգման ծախսեր	Հավելված 21	500,000.0

ԵՊՀ ռեկտորի իրավասության շրջանակներում է 2015 թվականի նախահաշվի կատարման ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ելքային (ծախսային) հոդվածների միջև կատարել վերաբաշխում՝ դրանց 10 տոկոսի սահմաններում, բացի աշխատավարձի և կրթաթոշակի հոդվածներից:

ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	
1.1	Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից	6,267,415.0
այդ թվում՝		
1.1.1	Բակալավրիատի ուսուցման ծառայությունից	4,173,000.0
այդ թվում՝		
1.1.1.1	ՀՀ քաղաքացիներին մատուցված ծառայությունից	4,055,000.0
1.1.1.2	Օտարերկրյա քաղաքացիներին մատուցված ծառայությունից	118,000.0
1.1.2	Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից	577,000.0
այդ թվում՝		
1.1.2.1	ՀՀ քաղաքացիներին մատուցված ծառայությունից	560,000.0
1.1.2.2	Օտարերկրյա քաղաքացիներին մատուցված ծառայությունից	17,000.0
1.1.3	Ասպիրանտուրայի ուսուցման ծառայությունից	52,415.0
1.1.4	Հեռակա ուսուցման ծառայությունից	1,500,000.0
այդ թվում՝		
1.1.4.1	Բակալավրիատի ուսուցման ծառայությունից	1,150,000.0
1.1.4.2	Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից	350,000.0
1.1.5	Հնարավոր կորուստների պահուստ վճարովի ուսուցման ծառայությունից	(35 000,0)

Հավելված 2		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	
1.2	Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից	2,507,585.0
այդ թվում՝		
1.2.1	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծառայությունից	1,702,450.0
այդ թվում՝		
1.2.1.1	Բարձրագույն կրթության ծառայությունից	1,488,450.0
1.2.1.2	Հետբուհական կրթության ծառայությունից	130,000.0
1.2.1.3	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բարձրագույն կրթական ծառայությունից	84,000.0
1.2.2	Գիտական և գիտատեխնիկական գործունեությունից	791,000.0
այդ թվում՝		
1.2.2.1	Դրամաշնորհային (թեմատիկ), բազային լաբորատորիաների, հիմնարար և կարևորագույն, միջազգային համագործակցության ծրագրերից	724,000.0
1.2.2.2	Գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներից և բարձրագույն որակավորման հանձնաժողովից ստացվող գումարներից	55,000.0
1.2.2.3	Գիտական գործուղումների և գիտաժողովների ծրագրերից	2,000.0
1.2.2.4	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբեկտների պահպանման ծրագրից	10,000.0
1.2.3.	Այլ գործունեությունից	14,135.0
այդ թվում՝		
1.2.3.1	Պրահայի «Կառլով»-ի համալսարանում հայոց լեզվի դասավանդման ծրագրով	4,935.0
1.2.3.2	«Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպման ծրագրով	2,000.0
1.2.3.3	Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման ծրագրով	3,600.0
1.2.3.4	Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրման ծրագրով (Ավստրիա, Զալցբուրգ)	3,600.0

Հավելված 3		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	
2.	Գործառնական այլ եկամուտներից՝ ներառյալ ԱԱՀ	290,000.0
այդ թվում՝		
2.1	Եկամուտներ լրացուցիչ կրթական դասընթացներից	100,600.0
2.2	Եկամուտներ ուսումնաարտադրական բազաների ծառայություններից	57,000.0
այդ թվում՝		
2.2.1	Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայի գործունեությունից	57,000.0
2.2.2	Հանքավանի ուսումնաարտադրական բազայի գործունեությունից	0.0
2.2.3	Բյուրականի ուսումնաարտադրական բազայի գործունեությունից	0.0
2.2.4	Դիլիջանի մարզաառողջարանի գործունեությունից	0.0
2.3	Եկամուտներ հյուրերի տան ծառայություններից	57,000.0
2.4	Եկամուտներ ատամնաբուժական ծառայությունից	15,000.0
2.5	Վարձակալական եկամուտներից	20,000.0
2.6	Եկամուտներ մարզասրահի ծառայություններից	3,000.0
2.7	Եկամուտներ ընդունելության քննությունների կազմակերպումից	10,000.0
2.8	Եկամուտներ փաստաթղթերի ձևակերպումներից	4,000.0
2.9	Եկամուտներ քննությունների կազմակերպումից	12,000.0

2.10	Այլ եկամուտներից	17,000.0
այդ թվում՝		
2.10.1	Հիմնական միջոցների և ապրանքանյութական պաշարների օտարումից	5,000.0
2.10.2	Հանրակացարանային ծառայություններից	2,000.0
2.10.3	Այլ եկամուտներից	10,000.0

Հավելված 4		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	
3.	Ոչ գործառնական եկամուտներից	625,000.0
այդ թվում՝		
3.1	Դրամաշնորհային ծրագրերից	470,000.0
3.2	Եկամուտներ բանկում ավանդ ձևակերպված միջոցներից ստացվող տոկոսներից	50,000.0
3.3	Բարեգործական եկամուտներից	105,000.0

Հավելված 5		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
1.	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր	6,653,000.0
այդ թվում՝		
1.1	Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծախսեր	3,480,000.0
1.2	Վարչական անձնակազմի ծախսեր	330,000.0
1.3	Ուսումնաօժանդակ անձնակազմի ծախսեր	460,000.0
1.4	Սպասարկող և այլ անձնակազմի ծախսեր	550,000.0
1.5	Ժամավճարային հիմունքով աշխատանքի վարձատրության ծախսեր	150,000.0
1.6	Հավելավճարների ծախսեր պրոֆեսորադասախոսական և այլ անձնակազմի աշխատակիցներին հեռակա ուսուցման եկամուտներից	377,000.0
1.7	Տարբերակված աշխատավարձի ծախսեր պրոֆեսորադասախոսական անձնակազմին	360,000.0
1.8	Մանկավարժական պրակտիկայի ծախսեր	26,500.0
1.9	Գիտական գործունեության անձնակազմի ծախսեր	545,800.0
1.10	Դրամաշնորհային ծրագրերի և լրացուցիչ կրթական դասընթացների անձնակազմի ծախսեր	310,200.0
1.11	Պայմանագրային (միանվագ) աշխատանքների վարձատրության ծախսեր	45,000.0
1.12	Խրախուսման և ֆինանսական աջակցության ծախսեր	18,500.0
Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված վճարումների ծախսերում ներառված են.		
ա.	Որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանցից պահվող եկամտային հարկը	1,650,000.0
բ.	Որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանցից պահվող սոցիալական վճարը	120,000.0

Հավելված 6		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
2.	Կրթաթոշակի ծախսեր	219,000.0
այդ թվում՝		
2.1	Կրթաթոշակ՝ բակալավրիատի ուսանողներին	90,000.0
2.2	Կրթաթոշակ՝ մագիստրատուրայի ուսանողներին	44,000.0
2.3	Կրթաթոշակ՝ ասպիրանտներին	30,000.0
2.4	Անվանական կրթաթոշակ	13,000.0
2.5	Կրթաթոշակ՝ դրամաշնորհային ծրագրերի և լրացուցիչ կրթական դասընթացների մասնակիցներին	42,000.0

Հավելված 7		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
3.	Վճարումներ պետական բյուջե	188,000.0
այդ թվում՝		
3.1	Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ	180,000.0
այդ թվում՝		
3.1.1	Շահութահարկ	120,000.0
3.1.2	ԱԱՀ	45,000.0
3.1.3	Այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ	15,000.0
3.2	Բյուջե փոխանցվող տարածքի վարձավճարներ	8,000.0

Հավելված 8		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
4.	Կոմունալ վճարների ծախսեր	328,000.0
այդ թվում՝		
4.1	էլեկտրաէներգիայի ծախսեր	145,000.0
4.2	Գազի ծախսեր	145,000.0
4.3	Ջրամատակարարման և ջրահեռացման ծախսեր	28,000.0
4.4	Կոմունալ այլ վճարների ծախսեր	10,000.0

Հավելված 9		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
5.	Փոստի և կապի վճարների ծախսեր	33,500.0
այդ թվում՝		
5.1	Հեռախոսակապի ծախսեր	16,000.0
5.2	Ինտերնետ կապի ծախսեր	15,000.0
5.3	Փոստային ծախսեր	2,500.0

Հավելված 10		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
6.	Գրասենյակային ծախսեր	40,000.0
այդ թվում՝		
6.1	Գրենական պիտույքների ծախսեր	30,000.0
6.2	Քարտրիջներ և դրանց լիցքավորման ծախսեր	10,000.0

Հավելված 11		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
7.	Ապրանքանյութական պաշարների ծախսեր	151,500.0
այդ թվում՝		
7.1	Շինանյութեր	20,000.0
7.2	Տնտեսական ապրանքներ	20,000.0
7.3	Սննդային ապրանքներ	44,000.0
7.4	Համակարգչային պարագաներ	6,500.0
7.5	Լամպեր և լուսարձակներ	6,000.0
7.6	Տպագրական նյութեր	6,000.0

7.7	Փափուկ գույք	4,000.0
7.8	Քիմիական և լաբորատոր նյութեր	29,000.0
7.9	Մարզական գույք	2,500.0
7.10	Դեղորայք	1,500.0
7.11	Գործիքներ	2,000.0
7.12	Ապրանքանյութական այլ պաշարներ	10,000.0

Հավելված 12		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
8.	Տրանսպորտային ծախսեր	58,500.0
այդ թվում՝		
8.1	Վառելիքի և քսայուղի ծախսեր	22,000.0
8.2	Ավտոսպասարկման և ավտոպահեստամասերի ծախսեր	6,500.0
8.3	Տրանսպորտային միջոցների վարձակալության ծախսեր	30,000.0

Հավելված 13		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
9.	Ծառայությունների ձեռքբերման ծախսեր	385,000.0
այդ թվում՝		
9.1	Տպագրական ծառայություններ	55,000.0
9.2	Գույքի նորոգման և սպասարկման ծառայություններ	7,000.0
9.3	Ցուցանակների պատրաստման ծառայություններ	1,500.0
9.4	Գովազդի (հայտարարությունների) ծառայություններ	5,500.0
9.5	Որակավորման բարձրացման դասընթացների ծառայություններ	1,500.0
9.6	Փաստաթղթերի արխիվացման ծառայություններ	1,000.0
9.7	Ասպիրանտուրայի դիմորդների դասընթացների ծառայություններ և «TOEFL» քննության մասնակցության վճարներ	10,500.0
9.8	Աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ	20,000.0
9.9	Ապահովագրական ծառայություններ	2,000.0
9.10	Արտադրական պրակտիկայի կազմակերպման ծառայություններ մասնագիտական կազմակերպություններում	3,000.0
9.11	Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հյուրասիրությունների կազմակերպման ծառայություններ	28,000.0
9.12	Չափագրումների, հեղինակային և տեխնիկական հսկողությունների, նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմման և փորձաքննության ծառայություններ	20,000.0
9.13	Հակահրդեհային միջոցառումների մասնագիտական ծառայություններ	1,500.0

9.14	Բանկային և մաքսային ձևակերպումների ծառայություններ	5,500.0
9.15	Տեսանյութերի, ֆիլմերի մոնտաժման և նկարահանման ծառայություններ	3,000.0
9.16	Սանմաքրման ծառայություններ	131,000.0
9.17	Անվտանգության պահպանման ծառայություններ	81,000.0
9.18	Այլ ծառայություններ	8,000.0

Հավելված 14		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
12.	Վարձակալության ծախսեր	21,500.0
այդ թվում՝		
12.1	Մարզասրահների վարձակալության ծախսեր	1,000.0
12.2	Բնակարանների վարձակալության ծախսեր	1,000.0
12.3	Սրահների և հյուրատների վարձակալության ծախսեր	12,500.0
12.4	Տեխնիկայի, լուսարձակների, բեմական պարագաների և այլ գույքի վարձակալության ծախսեր	7,000.0

Հավելված 15		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
13.	Գործուղման ծախսեր	168,000.0
այդ թվում՝		
13.1	Ֆակուլտետների և համահամալսարանական ամբիոնների գործուղման ծախսեր	28,000.0
13.2	Վարչական և այլ անձնակազմի գործուղման ծախսեր	10,000.0
13.3	Ուսանողական գործուղումների ծախսեր	2,000.0
13.4	Միջազգային օլիմպիադաների մասնակցության գործուղման ծախսեր	4,000.0
13.5	Գործուղման և դաշտային պրակտիկայի ծախսեր ՀՀ տարածքում	8,000.0
13.6	ՌԴ Սանկտ-Պետերբուրգի և ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանների հետ համագործակցության շրջանակներում ուսանողների գործուղման ծախսեր	10,000.0
13.7	Գիտական գործունեությամբ նախատեսված գործուղման ծախսեր	46,000.0
13.8	Դրամաշնորհային ծրագրերով նախատեսված գործուղման ծախսեր	60,000.0

Հավելված 16		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
14.	Նպատակային ֆինանսավորումների ծախսեր	205,000.0
այդ թվում՝		
14.1	Համաֆինանսավորման ծախսեր	20,000.0
14.2	Ֆինանսավորումներ գործընկեր կազմակերպություններին	185,000.0

Հավելված 17		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
15.	Գրադարանային ծախսեր	47,500.0
	այդ թվում՝	
15.1	Թերթերի և ամսագրերի բաժանորդագրության ծախսեր	2,000.0
15.2	Էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրության ծախսեր	13,500.0
15.3	ԵՊՀ հրատարակչության հրատարակած գրքերի ձեռքբերման ծախսեր	25,000.0
15.4	Այլ հեղինակներից գրքերի ձեռքբերման ծախսեր	7,000.0

Հավելված 18.		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
16.	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսեր	84,000.0
այդ թվում՝		
16.1	Ուսանողական նպաստների ծախսեր	69,720.0
16.2	Արտոնություն ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցման ծախսեր	5,280.0
16.3	Սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցում	2,000.0
16.4	Կրթաթոշակի ծախսեր	7,000.0

Հավելված 19.		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
17.	Այլ ծախսեր	239,500.0
այդ թվում՝		
17.1	Համագործակցության ծախսեր՝ Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի հետ	125,000.0
17.2	Համագործակցության ծախսեր՝ Հայաստան Համահայկական Հիմնադրամի հետ	5,000.0
17.3	Բարեգործական ծախսեր	3,000.0
17.4	Մշակութային միջոցառումների տոմսերի ձեռքբերման ծախսեր	1,500.0
17.5	Պահուստային ֆոնդ	100,000.0
17.6	Այլ ծախսեր	5,000.0

Հավելված 20.		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
18.	Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր	352,500.0
այդ թվում՝		
18.1	Համակարգչային գույքի ձեռքբերման	47,000.0
18.2	Լաբորատոր սարքավորումների ձեռքբերման	191,000.0
18.3	Կահույքի ձեռքբերման	30,000.0

18.4	Օդորակիչների ձեռքբերման	3,500.0
18.5	Հակահրդեհային գույքի ձեռքբերման	5,000.0
18.6	Ոչ նյութական ակտիվների ձեռքբերման	3,000.0
18.7	Ահազանգման համակարգի ձեռքբերման	5,000.0
18.8	Կաթսաների ձեռքբերման	50,000.0
18.9	Ոչ ընթացիկ այլ ակտիվների ձեռքբերման	18,000.0

Հավելված 21.		Գումարը (հազար դրամ)
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	
19.	Հիմնանորոգման ծախսեր	500,000.0
այդ թվում՝		
19.1	ԵՊՀ կենտրոնական, ուսումնական և գրադարանի մասնաշենքերի հիմնանորոգման ծախսեր	470,000.0
19.2	Մարզահամալիրի մասնաշենքի հիմնանորոգման ծախսեր	10,000.0
19.3	Ընդհանուր օգտագործման տարածքների, համակարգերի, ցանկապատերի և այլ նորոգման ծախսեր	20,000.0

ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան

ԵՊՀ 2015 Թ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ ԳՈՒՄԱՐԸ՝ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ.



ԵՊՀ 2015 Թ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ



ԵՊՀ 2015 Թ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ՇԱԽՍԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ
ԸՆԹԱՑԻԿ ՇԱԽՍԵՐ



ԵՊՀ 2015 Թ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ՇԱԽՍԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ
ԸՆԹԱՑԻԿ ՇԱԽՍԵՐ



ԵՊՀ 2015 Թ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ
ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ



3. 2014 ԵՎ 2015 ԹԹ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2014 ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

I Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	Հղում	2014 թ. Գումարը (հազար դրամ)	2015 թ. Գումարը (հազար դրամ)	Համեմատություն % Ն/Տ* նկատմամբ	Համեմատություն % Հ/Տ* նկատմամբ
Ընդամենը			8,913,000.0	9,690,000.0	8.7	100.0
այդ թվում՝						
1.	Գործառնական գործունեությունից եկամուտներ		8,036,800.0	8,775,000.0	9.2	90.6
այդ թվում՝						
1.1	Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայություններից	Հավելված 1	5,730,000.0	6,267,415.0	9.4	64.7
1.2	Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումներից	Հավելված 2	2,306,800.0	2,507,585.0	8.7	25.8
2.	Գործառնական այլ եկամուտներից՝ ներառյալ ԱԱՀ	Հավելված 3	296,200.0	290,000.0	(2.1)	3.0
3.	Ոչ գործառնական եկամուտներից	Հավելված 4	580,000.0	625,000.0	7.8	6.4

Ի Ի Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	Հղում	2014 թ. Գումարը (հազար դրամ)	2015 թ. Գումարը (հազար դրամ)	Համեմատություն % Ն/Տ նկատմամբ	Համեմատություն % Հ/Տ նկատմամբ
Ընդամենը			8,913,000.0	9,690,000.0	8.7	100.0
այդ թվում՝						
Ընթացիկ ծախսեր			8,122,400.0	8,837,500.0	8.8	91.2
այդ թվում՝						
1.	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր	Հավելված 5	6,347,445.0	6,653,000.0	4.8	68.7
2.	Կրթաթոշակի ծախսեր	Հավելված 6	205,500.0	219,000.0	6.6	2.3
3.	Վճարումներ պետական բյուջե	Հավելված 7	153,500.0	188,000.0	22.5	1.9
4.	Կոմունալ վճարների ծախսեր	Հավելված 8	278,500.0	328,000.0	17.8	3.4
5.	Փոստային և կապի վճարների ծախսեր	Հավելված 9	47,000.0	33,500.0	(28.7)	0.3
6.	Գրասենյակային ծախսեր	Հավելված 10	33,000.0	40,000.0	21.2	0.4
7.	Ապրանքանյութական պաշարների ծախսեր	Հավելված 11	126,000.0	151,500.0	20.2	1.6
8.	Տրանսպորտային ծախսեր	Հավելված 12	51,500.0	58,500.0	13.6	0.6
9.	Ծառայությունների ձեռքբերման ծախսեր	Հավելված 13	345,700.0	385,000.0	11.4	4.0
10.	Ներկայացուցչական ծախսեր		9,000.0	7,000.0	(22.2)	0.1
11.	Անդամավճարների ծախսեր		8,500.0	8,500.0	0.0	0.1

12.	Վարձակալության ծախսեր	Հավելված 14	14,000.0	21,500.0	53.6	0.2
13.	Գործուղման ծախսեր	Հավելված 15	152,800.0	168,000.0	9.9	1.7
14.	Նպատակային ֆինանսավորումների ծախսեր	Հավելված 16	66,800.0	205,000.0	206.9	2.1
15.	Գրադարանային ծախսեր	Հավելված 17	50,550.0	47,500.0	(6.0)	0.5
16.	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսեր	Հավելված 18	78,155.0	84,000.0	7.5	0.9
17.	Այլ ծախսեր	Հավելված 19	154,450.0	239,500.0	55.1	2.5
Ոչ ընթացիկ ծախսեր			790,600.0	852,500.0	7.8	8.8
այդ թվում՝						
18,	Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր	Հավելված 20	435,600.0	352,500.0	(19.1)	3.6
19,	Հիմնանորոգման ծախսեր	Հավելված 21	355,000.0	500,000.0	40.8	5.1

* Ն/Տ՝ նախորդ տարի:
* Հ/Տ՝ հաշվետու տարի:

ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2014 ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ)

Հավելված 1		2014 թ.	2015 թ.
Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	Գումարը (հազար դրամ)	
1.1	Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից	5,730,000.0	6,267,415.0
այդ թվում՝			
1.1.1	Բակալավրիատի ուսուցման ծառայությունից	3,416,800.0	4,173,000.0
այդ թվում՝			
1.1.1.1	ՀՀ քաղաքացիներին մատուցված ծառայությունից	3,290,000.0	4,055,000.0
1.1.1.2	Օտարերկրյա քաղաքացիներին մատուցված ծառայությունից	126,800.0	118,000.0
1.1.2	Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից	764,700.0	577,000.0
այդ թվում՝			
1.1.2.1	ՀՀ քաղաքացիներին մատուցված ծառայությունից	746,700.0	560,000.0
1.1.2.2	Օտարերկրյա քաղաքացիներին մատուցված ծառայությունից	18,000.0	17,000.0
1.1.3	Ասպիրանտուրայի ուսուցման ծառայությունից	51,500.0	52,415.0
1.1.4	Հեռակա ուսուցման ծառայությունից	1,532,000.0	1,500,000.0
այդ թվում՝			
1.1.4.1	Բակալավրիատի ուսուցման ծառայությունից	1,122,000.0	1,150,000.0
1.1.4.2	Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից	410,000.0	350,000.0
1.1.5	Հնարավոր կորուստների պահուստ	(35,000.0)	(35,000.0)

Հավելված 2		2014 թ.	2015 թ.
Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	Գումարը (հազար դրամ)	
1.2	Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից	2,306,800.0	2,507,585.0
այդ թվում՝			
1.2.1	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծառայությունից	1,411,485.0	1,702,450.0
այդ թվում՝			
1.2.1.1	Բարձրագույն կրթության ծառայությունից	1,226,340.0	1,488,450.0
1.2.1.2	Հետբուհական կրթության ծառայությունից	106,990.0	130,000.0
1.2.1.3	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բարձրագույն կրթական ծառայությունից	78,155.0	84,000.0
1.2.2	Գիտական և գիտատեխնիկական գործունեությունից	880,215.0	791,000.0
այդ թվում՝			
1.2.2.1	Դրամաշնորհային (թեմատիկ), բազային լաբորատորիաների, հիմնարար և կարևորագույն, միջազգային համագործակցության ծրագրերից	776,375.0	724,000.0
1.2.2.2	Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների, գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներից և բարձրագույն որակավորման հանձնաժողովից ստացվող գումարներից	89,340.0	55,000.0
1.2.2.3	Գիտական գործուղումների և գիտաժողովների ծրագրերից	4,500.0	2,000.0
1.2.2.4	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբեկտների պահպանման ծրագրից	10,000.0	10,000.0
1.2.3.	Այլ գործունեությունից	15,100.0	14,135.0
այդ թվում՝			
1.2.3.1	Հալեպի / Պրահայի համալսարաններում հայոց լեզվի դասավանդման ծրագրով	4,900.0	4,935.0
1.2.3.2	«Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպման ծրագրով	3,000.0	2,000.0
1.2.3.3	Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման ծրագրով	3,600.0	3,600.0
1.2.3.4	Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրման ծրագրով (Ավստրիա, Զալցբուրգ)	3,600.0	3,600.0

Հավելված 3		2014 թ.	2015 թ.
Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	Գումարը (հազար դրամ)	
2.	Գործառնական այլ եկամուտներից՝ ներառյալ ԱԱՀ	296,200.0	290,000.0
այդ թվում՝			
2.1	Եկամուտներ լրացուցիչ կրթական դասընթացներից	100,600.0	95,000.0
2.2	Եկամուտներ ուսումնաարտադրական բազաների ծառայություններից	57,000.0	57,000.0
այդ թվում՝			
2.2.1	Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայի գործունեությունից	57,000.0	57,000.0
2.2.2	Հանքավանի ուսումնաարտադրական բազայի գործունեությունից	0.0	0.0
2.2.3	Բյուրականի ուսումնաարտադրական բազայի գործունեությունից	0.0	0.0
2.2.4	Դիլիջանի մարզաառողջարանի գործունեությունից	0.0	0.0
2.3	Եկամուտներ հյուրերի տան ծառայություններից	57,000.0	57,000.0
2.4	Եկամուտներ ատամնաբուժական ծառայությունից	13,500.0	15,000.0
2.5	Վարձակալական եկամուտներից	20,500.0	20,000.0
2.6	Եկամուտներ մարզասրահի ծառայություններից	3,000.0	3,000.0
2.7	Եկամուտներ ընդունելության քննությունների կազմակերպումից	12,000.0	10,000.0
2.8	Եկամուտներ փաստաթղթերի ձևակերպումներից	4,000.0	4,000.0
2.9	Եկամուտներ քննությունների կազմակերպումից	12,000.0	12,000.0
2.10	Այլ եկամուտներից	16,600.0	17,000.0

այդ թվում՝			
2.10.1	Հիմնական միջոցների և ապրանքանյութական պաշարների օտարումից	4,900.0	5,000.0
2.10.2	Հանրակացարանային ծառայություններից	1,500.0	2,000.0
2.10.3	Այլ եկամուտներից	10,200.0	10,000.0

Հավելված 4		2014 թ.	2015 թ.
Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	Գումարը (հազար դրամ)	
3.	Ոչ գործառնական եկամուտներից	580,000.0	625,000.0
այդ թվում՝			
3.1	Դրամաշնորհային ծրագրերից	400,000.0	470,000.0
3.2	Եկամուտներ բանկում ավանդ ձևակերպված միջոցներից ստացվող տոկոսներից	50,000.0	50,000.0
3.3	Բարեգործական եկամուտներից	130,000.0	105,000.0

Հավելված 5		2014 թ.	2015 թ.
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	Գումարը (հազար դրամ)	
1.	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր	6,347,445.0	6,653,000.0
այդ թվում՝			
1.1	Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծախսեր	3,150,000.0	3,480,000.0
1.2	Վարչական անձնակազմի ծախսեր	314,445.0	330,000.0
1.3	Ուսումնաօժանդակ անձնակազմի ծախսեր	450,000.0	460,000.0
1.4	Սպասարկող և այլ անձնակազմի ծախսեր	595,000.0	550,000.0
1.5	Ժամավճարային հիմունքով աշխատանքի վարձատրության ծախսեր	140,000.0	150,000.0
1.6	Հավելավճարների ծախսեր պրոֆեսորադասախոսական և այլ անձնակազմի աշխատակիցներին հեռակա ուսուցման եկամուտներից	380,000.0	377,000.0
1.7	Տարբերակված աշխատավարձի ծախսեր պրոֆեսորադասախոսական անձնակազմին	360,000.0	360,000.0
1.8	Մանկավարժական պրակտիկայի ծախսեր	26,500.0	26,500.0
1.9	Գիտական գործունեության անձնակազմի ծախսեր	703,000.0	545,800.0
1.10	Դրամաշնորհային ծրագրերի և լրացուցիչ կրթական դասընթացների անձնակազմի ծախսեր	190,000.0	310,200.0
1.11	Պայմանագրային (միանվագ) աշխատանքների վարձատրության ծախսեր	20,000.0	45,000.0
1.12	Խրախուսման և ֆինանսական աջակցության ծախսեր	18,500.0	18,500.0
Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված վճարումների ծախսերում ներառված է.			
ա.	Որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանցից պահվող եկամտային հարկի վճարումներ պետական բյուջե	1,600,000.0	1,650,000.0
բ.	Որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանցից պահվող սոցիալական վճարներ	158,000.0	120,000.0

Հավելված 6		2014 թ.	2015 թ.
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	Գումարը (հազար դրամ)	
2.	Կրթաթոշակի ծախսեր	205,500.0	219,000.0
այդ թվում՝			
2.1	Կրթաթոշակ՝ բակալավրիատի ուսանողներին	85,000.0	90,000.0
2.2	Կրթաթոշակ՝ մագիստրատուրայի ուսանողներին	44,000.0	44,000.0
2.3	Կրթաթոշակ՝ ասպիրանտներին	30,000.0	30,000.0
2.4	Անվանական կրթաթոշակ	12,500.0	13,000.0
2.5	Կրթաթոշակ՝ դրամաշնորհային ծրագրերի և լրացուցիչ կրթական դասընթացների մասնակիցներին	34,000.0	42,000.0

Հավելված 7		2014 թ.	2015 թ.
Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	Գումարը (հազար դրամ)	
3.	Վճարումներ պետական բյուջե	153,500.0	188,000.0
այդ թվում՝			
3.1	Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ	146,000.0	180,000.0
այդ թվում՝			
3.1.1	Շահութահարկ	85,000.0	120,000.0
